ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380250

07.08.14 N 10/5697
Ձեր N

«ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ» Հ/Կ-ի ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՍԱՔՈՒՆՑԻՆ

Հարգելի պարոն Սաքունց,

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանն ուղղված Ձեր գրության կապակցությամբ հայտնում եմ, որ «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ **եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը, կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է,** ապա նա տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում նրան տրամադրել նաև այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը:

Այդ առումով հայտնում եմ, որ «Անհայտ կորած անձանց մասին» ՀՀ օրենքի նախագիծը ձեռք բերելու համար կարող եք դիմել հիշյալ օրենքի նախագիծը մշակող մարմնին՝ ՀՀ արտաքին գործերի նախարարությանը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կատարող՝ Էլինա Մադոյան
ՀՀ ԱՆ աշխատակազմի օրենսդրության վերլուծության և կատարելագործման վարչություն,
Հեռ. 380-227